Կազմված է 01.10. 2019 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«01»10.2019Թ.

ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

_____Լիլիթ Դանիելյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«21» 03.2019 Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 211.171.1064832

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

_____02694406_____

«21» 03.2019 Թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ _____ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«_____» _____ 20___Թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

_____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

(նոր խմբագրություն)

Բովանդակություն

1. Սահմանումներ……
2. Ընդհանուր դրույթներ…….
3. Անվանումը……
4. Կնիքը, ձևաթուղթը……..
5. Գործունեության տարածքը……..
6. Գտնվելու վայրը……..
7. Լեզուն……
8. Ասոցիացիայի նպատակները և գործունեության առարկան …….
9. Անդամակցություն……...
10. Ասոցիացիայի Անդամների իրավունքները և պարտականությունները….
11. Ժողովը……..
12. Խորհուրդը….……...
13. Գործադիր տնօրենը ……...……
14. Սեփականությունը……
15. Առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները……
16. Վերակազմակերպումը և լուծարումը……

1. Սահմանումներ

1.1. Սույն կանոնադրությունում, ինչպես նաև «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ կամ դրա մարմիններից ելնող ցանկացած և բոլոր այլ փաստաթղթերում ստորև շարադրված հասկացություններն ունեն և կունենան հետևյալ իմաստները (եթե այլ իմաստ սահմանված չէ այդ փաստաթղթերում կամ չի բխում դրանց համատեքստից).

1.1.1 «*Ասոցիացիա*»՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ,

1.1.2 «*Կանոնադրություն*»՝ Ասոցիացիայի կանոնադրությունը՝ դրա բոլոր փոփոխություններով և լրացումներով,

1.1.3 *«Անդամ»*՝ Ասոցիացիայի անդամ, ինչպես որ այն բնորոշված է Կանոնադրության 9.1 կետում,

1.1.4 *«Ժողով»*՝ Ասոցիացիայի բոլոր Անդամներից կամ նրանց պատվիրակներից կազմված՝ Ասոցիացիայի բարձրագույն մարմինը, ինչպես, որ այն բնորոշված է Կանոնադրության 11 կետում,

1.1.5 «*Խորհուրդ*»՝ Ժողովի կողմից ընտրված Ասոցիացիայի կոլեգիալ կառավարման մարմինը, ինչպես որ այն բնորոշված է Կանոնադրության 12 կետում,

1.1.6 *«Խորհրդի նախագահ»*՝ Ասոցիացիայի Խորհրդի կազմի մշտական անդամ հանդիսացող՝ Ասոցիացիայի պաշտոնատար անձը, ինչպես, որ այն բնորոշված է Կանոնադրության 12.12 կետում,

1.1.7 *«Գործադիր Տնօրեն»*՝ Ասոցիացիայի ժողովի կողմից մեկ տարի ժամկետով ընտրված գործադիր մարմինը, ինչպես, որ այն բնորոշված է Կանոնադրության 13 կետում:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. «Հայաստանի հյուրանոցների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (հետագա տեքստում՝ Ասոցիացիա) իր անդամների շահերի ընդհանրության և կամավորության սկզբունքի հիման վրա, հյուրանոցային ծառայություններ մատուցող առևտրային կազմակերպություններին աջակցելու և իրավական և այլ բնույթի օժանդակություն ցուցաբերելու, ինչպես նաև ընդհանուր գույքային և ոչ գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ստեղծված հասարակական կազմակերպություն է:

2.2. Ասոցիացիան գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն Կանոնադրությանը համապատասխան:

2.3. Ասոցիացիայի գործունեությունը հիմնված է օրինականության, հրապարակայնության, ինքնակառավարման, իրավահավասարության, անդամության կամավորության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, հաշվետվողականության սկզբունքների վրա:

2.4. Ասոցիացիան իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

2.5. Ասոցիացիան կարող է ունենալ խորհրդանիշ:

2.6. Ասոցիացիայի Անդամները պահպանում են իրենց ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը:

2.7. Անդամների՝ Ասոցիացիային հանձնած գույքը Ասոցիացիայի սեփականությունն է, որն օգտագործվում է սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

3. Անվանումը

3.1. Ասոցիացիայի անվանումն է.

հայերեն՝ «Հայաստանի Հյուրանոցների Ասոցիացիա» Հասարակական Կազմակերպություն, կրճատ՝ «ՀՀԱ» ՀԿ

անգլերեն լրիվ՝ “Armenian Hotel Association” Non-Governmental Organization, կրճատ՝ “AHA” NGO

ռուսերեն լրիվ՝ Общественная Организация “Ассоциация Отелей Армении”, կրճատ՝ ОО “АОА”

4. Կնիքը, ձևաթուղթը

4.1. Ասոցիացիան ունի կնիք և ձևաթուղթ: Ասոցիացիայի ձևաթուղթը նշում է պարունակում Ասոցիացիայի անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների համարների և հասցեների մասին:

4.2. Ասոցիացիայի կնիքը և ձևաթուղթը Ասոցիացիայի մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում օգտագործվում են Ասոցիացիայից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի ձևակերպման և վավերացման համար:

4.3. Ասոցիացիայի կնիքի և ձևաթղթի օգտագործումը չի կարող անվերապահորեն անհրաժեշտ համարվել՝ Ասոցիացիայից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի իսկության և վավերականության հաստատման համար՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Բոլոր դեպքերում, Ասոցիացիայից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի իսկության և վավերականության անհրաժեշտ հավաստումն է Ասոցիացիայի իրավասու պաշտոնատար անձանց և (կամ) ներկայացուցիչների ստորագրությունը:

5. Գործունեության տարածքը

5.1. Ասոցիացիան ստեղծված է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների տարածքում գործունեության իրականացման համար:

6. Գտնվելու վայրը

6.1. Ասոցիացիայի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Հյուսիսային պողոտա 5/1 շենք, քաղաք Երևան, 0001:

7. Լեզուն

7.1. Ասոցիացիայի պաշտոնական լեզուն հայերենն է:

7.2. Ասոցիացիայի կողմից պաշտոնապես կարող են օգտագործվել նաև այլ լեզուներ՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

8. Ասոցիացիայի նպատակները և գործունեության առարկան

8.1. Ասոցիացիայի նպատակներն են.

8.1.1. Աջակցել հյուրանոցային ոլորտում գործող կազմակերպություններին և պաշտպանել նրանց ընդհանուր շահերը (հատկապես Ասոցիացիայի անդամների) ազգային և միջազգային մակարդակի վրա,

8.1.2. Տեղեկացնել Ասոցիացիայի անդամներին ոլորտի կարևորագույն խնդիրների, դրանց լուծման ընթացքի և զարգացման միտումների մասին,

8.1.3. Ասոցիացիայի անդամներին մատուցել խորհրդատվական ծառայություններ ցանկացած ոլորտում:

8.2. Ասոցիացիայի գործունեության առարկան վերոնշյալ, ինչպես նաև այլ նպատակների իրականացումն է: Ասոցիացիան, մասնավորապես (բայց չսահմանափակելով ներքոնշյալ կետերով) իրավասու է՝

8.2.1. ներկայացնել և պաշտպանել իր և իր Անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,

8.2.2. հյուրանոցային ոլորտի բարելավման նպատակով համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների հետ,

8.2.3. անդամակցել միջազգային կազմակերպություններին, ունենալ միջազգային կապեր, օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր:

8.2.4. հիմնադրել տնտեսական ընկերություններ և ընկերակցություններ և/կամ մասնակցել դրանց,

8.2.5. ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ,

8.2.6. իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար այլ աղբյուրներից ներգրավել միջոցներ,

8.2.7. կապեր հաստատել ոլորտի ներկայացուցիչների և նրանց գործընկերների միջև,

8.2.8. կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն Ասոցիացիայի անդամների գործունեության զարգացմանը,

8.2.9. կատարել տեղեկատվության փոխանակում Ասոցիացիայի անդամների միջև,

8.2.10. իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ գործունեություն:

9. Անդամակցություն

9.1. Ասոցիացիայի անդամ կարող է դառնալ հյուրանոցային տնտեսության այն օբյեկտը, որը՝ որպես մշտական տնտեսական գործունեություն Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է հյուրանոցային ծառայությունների մատուցում, ունի առնվազն 10 սենյակ, որոնցից առնվազն 5-ը՝ մեկ կամ երկտեղանոց համարներ, ով ընդունում է սույն Կանոնադրությունը, Ասոցիացիայի նպատակներն ու խնդիրները, ցանկանում է մասնակցել Ասոցիացիայի գործունեությանը և պատրաստակամություն է հայտնում կատարել Կանոնադրության պահանջները, այդ թվում՝ մուծելու անդամավճար:

9.2. Ասոցիացիային անդամակցությունը տեղի է ունենում կամավորության սկզբունքով:

9.3. Ասոցիացիայի անդամ դառնալու համար սույն Կանոնադրության 9.1 հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում գրավոր դիմում է ներկայացվում Խորհրդի նախագահի անունով:

9.4. Գրավոր դիմումի համաձայն Ասոցիացիայի անդամի անդամագրվելու վերաբերյալ որոշումը կայացվում է Խորհրդի կողմից:

9.5. Ասոցիացիայի անդամները վճարում են անդամավճար, որի չափը և վճարման կարգը սահմանվում է Ժողովի կողմից:

9.5.1. Անդամավճարի հաշվարկման համար սահմանվում է հետևյալ բանաձևը՝

ՍՔ X ԱՄ = ՏԱ, որտեղ

ՍՔ՝ Անդամ հյուրանոցի սենյակային ֆոնդի քանակ
ԱՄ՝ սենյակի հաշվով կիրառվող անդամավճարի միավոր
ՏԱ՝ Տարեկան անդամավճար

9.5.2 Սենյակի հաշվով կիրառվող անդամավճարի միավորի (ԱՄ) չափը սահմանվում է Ասոցիացիայի տարեկան կամ արտահերթ Ժողովի կողմից՝ Խորհրդի առաջարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ:

9.6. Ասոցիացիայի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ Ասոցիացիայի խորհրդի՝ տվյալ անդամին Ասոցիացիայի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնադրության 10.3 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

10. <u>Ասոցիացիայի անդամի իրավունքները և պարտականությունները</u>

10.1. Ասոցիացիայի անդամը իրավունք ունի Ժողովին մասնակցել ձայնի իրավունքով, ինչպես նաև ընտրել և ընտրվել Ասոցիացիայի մարմիններում, ներկա լինել Ասոցիացիայի Խորհրդի նիստերին:

10.2. Ասոցիացիայի անդամը իրավունք ունի Կանոնադրությանը համապատասխան՝

10.2.1 մասնակցել Ասոցիացիայի և Ասոցիացիայի մարմինների աշխատանքներին,

10.2.2 Խորհրդի կողմից սահմանված դեպքերում վճարովի կամ անվճար հիմունքներով օգտվել Ասոցիացիայի ծառայություններից,

10.2.3 սպառիչ տեղեկատվություն ստանալ Ասոցիացիայի գործունեության մասին, այդ թվում՝ ծանոթանալ Ասոցիացիայի մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

10.2.4 Ասոցիացիայի գործունեության վերաբերյալ դիմումներ և առաջարկություններ ներկայացնել Ասոցիացիայի մարմիններին և պաշտոնատար անձանց,

10.2.5 ստանալ Ասոցիացիայից իրավական օգնություն իր օրինական շահերի պաշտպանության համար, ինչպես նաև այլ օժանդակություն,

10.2.6 դուրս գալ Ասոցիացիայի անդամությունից,

10.2.7 բողոքարկել Ասոցիացիայի մարմինների որոշումները վերադասության կարգով:

10.3. Ասոցիացիայի անդամը պարտավոր է Կանոնադրությանը համապատասխան՝

10.3.1. ակտիվորեն մասնակցել Ասոցիացիայի աշխատանքներին,

10.3.2. իր գործունեությամբ և վարքով բարձր պահել Ասոցիացիայի հեղինակությունը, առանց Ասոցիացիայի իրավասու մարմնի կողմից տրված

լիազորագրի հանդես չգալ Ասոցիացիայի անունից, հոգալ Ասոցիացիայի հեղինակության բարձրացման համար,

10.3.3. հնարավորինս նպաստել Ասոցիացիայի նպատակների իրականացմանը,

10.3.4. զերծ մնալ Ասոցիացիային վարկաբեկող արարքներից և արտահայտություն-ներից,

10.3.5. գործել սույն Կանոնադրությանը համապատասխան, բարեխղճորեն կատարել Կանոնադրության պահանջները, ինչպես նաև Ասոցիացիայի մարմինների և պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում ընդունած, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող որոշումները:

10.3.6. սահմանված չափով և կարգով մուծել անդամավճար:

11. <u>ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ</u>

11.1. Ասոցիացիայի կառավարման կառուցվածքն է՝ Ժողովը, Խորհուրդը և Գործադիր տնօրենը:

<u>Ժողովը</u>

11.2. Ասոցիացիայի բարձրագույն մարմինը նրա անդամների ժողովն է, որը վերահսկողություն է իրականացնում Ասոցիացիայի գործունեության նկատմամբ:

11.3. Ժողովը բաղկացած է Ասոցիացիայի բոլոր Անդամներից կամ նրանց պատվիրակներից: Ասոցիացիայի ժողովը պատվիրակներով անցկացնելու դեպքում յուրաքանչյուր անդամ ժողովում ներկայացնում է մեկական պատվիրակ:

11.4. Ժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի ձևով: Ժողովի նիստերը լինում են տարեկան (այսուհետ՝ Տարեկան ժողով), և արտահերթ (այսուհետ՝ Արտահերթ ժողով):

11.5. Տարեկան ժողովը գումարվում է տարին մեկ անգամ՝ հաշված դրա նախորդ գումարման օրվանից և համարվում է հերթական ժողով: Տարեկան ժողովները գումարվում են Գործադիր տնօրենի կողմից:

11.6. Արտահերթ ժողովները գումարվում են ըստ անհրաժեշտության՝ Ասոցիացիայի անդամների 30 տոկոսի կամ գործադիր մարմնի նախաձեռնությամբ՝ ոչ ուշ քան 5 օրացուցային օրվա ընթացքում:

11.7. Ասոցիացիայի ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք առնվազն 2 շաբաթ (Տարեկան ժողովի դեպքում) կամ 3 օր առաջ (Արտահերթ ժողովի դեպքում)՝ պատշաճ ձևով տեղեկացվում են Ժողովի առաջիկա նիստի օրակարգի, հրավիրման ժամանակի և վայրի մասին:

11.8. Ժողովի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա են Ասոցիացիայի անդամների կամ նրանց պատվիրակների առնվազն կեսից ավելին:

11.9. Ժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են երեք տարի:

11.10. Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերն են՝

11.10.1 Կանոնադրությունում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը կամ Ասոցիացիայի նոր կանոնադրության հաստատումը,

11.10.2 Խորհրդի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և արտահերթ ընտրությունների նշանակումը,

11.10.3 Ասոցիացիայի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,

11.10.4 Ասոցիացիայի լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից,

11.10.5 Ասոցիացիայի կառուցվածքի հաստատումը,

11.10.6 Հինգ միլիոն ՀՀ դրամը գերազանցող արժեքով ցանկացած տեսակի գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ որոշման ընդունումը

11.11 Ժողովի այլ իրավասությանը վերապահված հարցերն են՝

11.11.1 Ասոցիացիայի գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը՝ ներառյալ Գործադիր տնօրենի տարեկան հաշվետվությունների հաստատումը,

11.11.2 Ասոցիացիայի գործունեության ռազմավարական ուղղությունների և ֆինանսական քաղաքականության հաստատումը,

11.11.3 այլ իրավաբանական անձի ստեղծումը, այլ կազմակերպությունում, այդ թվում՝ միջազգային, Ասոցիացիայի մասնակցության մասին որոշումներ ընդունումը,

11.11.4 Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումների՝ ներկայացուցչությունների և մասնաճյուղերի, ինչպես նաև հիմնարկների, հանձնաժողովների, աշխատանքային խմբերի ստեղծումը և լուծարումը, դրանց Կանոնադրությունների, կանոնակարգերի և աշխատակարգերի հաստատումը,

11.11.5 Ասոցիացիայի մարմինների իրավական ակտերի պահանջներին, Կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը:

11.12 Սույն կանոնադրության 11.10.2 կետում նշված հարցի վերաբերյալ որոշումները ենթակա են քննարկման և հաստատման միայն Տարեկան ժողովի կողմից, բացառությամբ, այն դեպքերի երբ Խորհրդի կազմը համալրելու և բացակայող անդամին փոխարինելու անհրաժեշտությամբ պայմանավորված Խորհրդի անդամի ընտրության հարցերը, որոնք կարող են քննարկվել նաև Արտահերթ ժողովում: Տվյալ դեպքում Խորհրդի ընտրված անդամը պաշտոնավարում է մինչև Տարեկան ժողովի գումարման օրը:

11.13 Ասոցիացիայի գործունեության կամ Ժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն առաջանալու դեպքում հարցերը լուծվում են Ժողովի որոշմամբ:

11.14 Իր իրավասությանը վերապահված հարցերով Ժողովն ընդունում է որոշումներ:

11.14.1. Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ է քվեարկել Ժողովի նիստին ներկա Ասոցիացիայի անդամների կամ պատվիրակների 60 տոկոս և ավելին:

11.14.2. Ցանկացած այլ հարցերի վերաբերյալ Ժողովի որոշումներն ընդունվում են, եթե կողմ է քվեարկել Ժողովի նիստին ներկա՝ Ասոցիացիայի անդամների կեսից ավելին:

11.15 Ժողովի նիստերի անցկացման հետ կապված ընթացակարգային հարցերը կարգավորվում են նիստում ընդունվող՝ Ժողովի կանոնակարգով սահմանված կանոններին համապատասխան:

12. <u>Խորհուրդը՝</u>

12.1. համարվում է Ասոցիացիայի կառավարման կոլեգիալ մարմինը Ասոցիացիայի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, բաղկացած է 5 անդամից, ընտրվում է Տարեկան ժողովի կողմից մեկ տարի ժամկետով:

12.2. քննարկում և որոշումներ է կայացնում Ասոցիացիայի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Ասոցիացիայի ժողովի և Գործադիր տնօրենի իրավասությունների մեջ,

12.3. նախապատրաստում է Ասոցիացիայի ժողովները,

12.4. մշակում է Ասոցիացիայի տարեկան ռազմավարական պլանը և հսկում դրա կատարման ընթացքը,

12.5. Առաջարկություններ է ներկայացնում Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև հիմնարկներ, հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր ստեղծելու և լուծարելու մասին, մշակում է դրանց Կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն Կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին տալիս է լիազորագրեր, հաստատում կամ չեղյալ է համարում Ասոցիացիայի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարների որոշումները Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումների տարածքային գրասենյակներ ստեղծելու և տարածքային գրասենյակների ղեկավարներ նշանակելու ու ազատելու մասին,

12.6. որոշում է կայացնում անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ,

12.7. Առաջարկություններ է ներկայացնում ցանկացած տեսակի աղբյուրների, այդ թվում՝ անդամավճարների և մուտքավճարների չափերի և դրանց գանձման կարգի վերաբերյալ,

12.8. սահմանում է Ասոցիացիայի անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը:

12.9. Ասոցիացիայի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 1/2-ից ավելին: Որոշումներն ընդունվում են Ասոցիացիայի խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի մասնակցությունը նիստին պարտադիր է: Վերջինիս բացակայությամբ խորհրդի կողմից ընդունված որոշումներն անվավեր են:

12.10. Ասոցիացիայի խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է ամիսը մեկ անգամ: Ասոցիացիայի խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների ընդհանուր թվի 1/2-ի գրավոր պահանջով կամ Խորհրդի նախագահի կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել խորհրդի ընդլայնված նիստեր՝ Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև Ասոցիացիայի այլ անդամների մասնակցությամբ:

12.11. Ժողովը Խորհրդի անդամների կազմից ընտրում է Խորհրդի նախագահ: Տարեկան Ժողովի կողմից Խորհրդի նախագահն ընտրվում է մեկ տարի ժամկետով: Արտահերթ ժողովի կողմից Խորհրդի նախագահն ընտրվում է մինչև առաջիկա գումարվող Տարեկան ժողովը ժամկետով:

12.12. Խորհրդի նախագահը Ասոցիացիայի պաշտոնատար անձն է, որը Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել Ասոցիացիան:

12.13. Խորհրդի նախագահը, գործելով Գործադիր տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա, փոխարինում է նրան, եթե Գործադիր տնօրենը բացակայում է:

13. <u>Գործադիր Տնօրենը</u>

13.1 Գործադիր տնօրենը ընտրվում է Ժողովի կողմից մեկ տարի ժամկետով և հաշվետու է Ժողովին:

13.2 Գործադիր տնօրենը Ասոցիացիայի գործադիր մարմինն է, որը Ժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կարող է քննել և լուծել Ասոցիացիայի գործունեությանը առնչվող ցանկացած հարց՝ բացառությամբ Ժողովի և Խորհրդի

իրավասությանը վերապահված հարցերից, ինչպես նաև իրականացնել սույն Կանոնադրությամբ սահմանված լիազորությունները և Ժողովի կողմից ընդունված որոշումներն ու ռազմավարական ծրագրերը։

13.3 Գործադիր տնօրենը՝

13.3.1 առանց լիազորագրի հանդես է գալիս Ասոցիացիայի անունից և տալիս է լիազորագրեր Ասոցիացիայի անունից հանդես գալու համար,

13.3.2 ներկայացնում է Ասոցիացիան երրորդ անձանց հետ հարաբերություններում,

13.3.3 Ժողովի որոշումների կատարման նպատակով և դրանց շրջանակներում՝ մշակում, հաստատում և տնօրինում է Ասոցիացիայի բյուջեն, հետևում դրա կատարմանը, Ասոցիացիայի անունից կնքում է պայմանագրեր և այլ գործարքներ, ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,

13.3.4 որոշում է ընդունում հինգ միլիոն ՀՀ դրամը չգերազանցող արժեքով ցանկացած տեսակի գույք կառավարելու՝ ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու, ինչպես նաև կառավարելու վերաբերյալ,

13.3.5 հաստատում է Ասոցիացիայի ներքին աշխատանքային կարգապահության կանոնները, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ասոցիացիայի հաստիքային աշխատողներին,

13.3.6 Ասոցիացիայի հաստիքային աշխատողներին տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,

13.3.7 ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կենսագործումը,

13.3.8 սահմանում է անդամավճարի գանձումը կազմակերպելու կարգը,

13.3.9 հաստատում է Ասոցիացիայի հաստիքացուցակը, Ասոցիացիայի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակարգը,

13.3.10 Կանոնադրությանը համապատասխան կազմակերպում է Ժողովի և Խորհրդի նիստերի հրավիրումը,

13.3.11 կազմակերպում է Ժողովի նիստերի արձանագրությունների վարումը, դրանց կնքումը, Ասոցիացիայի կնիքի պահպանությունը, Ասոցիացիայի փաստաթղթերի պահպանումը և արխիվացումը:

13.3.12 հանդիսանում է Ասոցիացիայի ֆինանսական հարցերով գլխավոր պատասխանատուն, կազմակերպում է Ասոցիացիայի ֆինանսական գործունեության ճշգրիտ իրականացումը:

13.3.13 իր իրավասության սահմաններում իրականացնում է այլ գործառույթներ:

13.4 Իր իրավասությանը վերապահված հարցերով գործադիր տնօրենը արձակում է հրամաններ և հրահանգներ, կայացնում է որոշումներ:

13.5 Գործադիր տնօրենի բացակայության պարագայում նրա լիազորություններն իրականացվում են Խորհրդի Նախագահի կողմից:

14. <u>Սեփականությունը</u>

14.1. Ասոցիացիայի սեփականությունը գոյանում է՝

14.1.1 անդամավճարներից և մուտքի վճարներից,

14.1.2 դրամաշնորհներից,

14.1.3 նվիրատվություններից,

14.1.4 նվիրաբերություններից,

14.1.5 կտակով ստացվող միջոցներից,

14.1.6 մշակութային միջոցառումներից,

14.1.7 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող գործունեությունից,

14.1.8 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ (այդ թվում օտարերկրյա) աղբյուրներից:

14.2. Ասոցիացիայի սեփականությունը կարող է օգտագործվել Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան, ներառելով (սակայն, չսահմանափակվելով)՝ ծրագրերի իրականացման, հաստիքային աշխատողների և Ասոցիացիայի պաշտոնատար անձանց վարձատրման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու Կանոնադրությանը չհակասող այլ գործունեության համար:

15. Առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներ

15.1 Ասոցիացիան, Ժողովի որոշմամբ կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ:

15.2 Առանձնացված ստորաբաժանումները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն Կանոնադրությանը և իրենց կանոնադրություններին համապատասխան: Հիմնարկները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Կանոնադրությանը և իրենց կանոնադրություններին համապատասխան:

15.3 Առանձնացված ստորաբաժանման և հիմնարկի կանոնադրությունը հաստատվում է Ժողովի կողմից:

15.4 Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները կարող են լուծարվել Ասոցիացիայի Ժողովի որոշմամբ:

16. Վերակազմակերպումը և լուծարումը

16.1 Ասոցիացիան կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ժողովի որոշմամբ:

16.2 Ասոցիացիան կարող է լուծարվել Ժողովի (ինքնալուծարում) կամ դատարանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

16.3. Լուծարման մասին որոշումն ընդունելուց հետո Ժողովը ստեղծում է լուծարային հանձնաժողով և սահմանվում են լուծարման կարգը և ժամկետները:

16.4. Լուծարման դեպքում Ասոցիացիայի գույքն ուղղվում է բացառապես Կանոնադրությունում ամրագրված նպատակներին, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե: